



ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

2024 թվականի նոյեմբերի 26-ին

քաղաք Երևանում

ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր Ռ.Մխիթարյանս, համաձայն չլինելով նույն դատական կազմի մեծամասնության (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան)՝ թիվ ՀԿԴ/0038/15/23 դատական վարույթով 2024 թվականի նոյեմբերի 26-ի որոշման պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ, ներկայացնում եմ սույն հատուկ կարծիքը.

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2022 թվականի հունիսի 29-ին [REDACTED] հարուցվել է թիվ [REDACTED] քրեական գործը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

1.1. 2022 թվականի հուլիսի 9-ին [REDACTED] նախաձեռնվել է թիվ [REDACTED] քրեական վարույթը՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով՝ վեց դրվագով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ վեց դրվագով, և 445-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ վեց դրվագով, որը 2022 թվականի հուլիսի 13-ին միացվել է թիվ [REDACTED] քրեական գործին (այսուհետ նաև՝ քրեական վարույթ):

1.2. 2022 թվականի սեպտեմբերի 5-ին [REDACTED] նախաձեռնվել է թիվ [REDACTED] քրեական վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով՝ երկու դրվագով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ երկու դրվագով, 445-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ երկու դրվագով, և 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով, որը նույն օրը միացվել է թիվ [REDACTED] քրեական վարույթին:

1.3. 2022 թվականի սեպտեմբերի 6-ին [REDACTED] նախաձեռնվել է թիվ [REDACTED] քրեական վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով՝ երկու դրվագով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով՝ երկու դրվագով, և 445-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ երկու դրվագով, որը նույն օրը միացվել է թիվ [REDACTED] քրեական վարույթին:

1.4. 2022 թվականի նոյեմբերի 22-ին [REDACTED] նախաձեռնվել

է թիվ [REDACTED] քրեական վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով՝ երեք դրվագով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 445-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, որը նույն օրը միացվել է թիվ [REDACTED] քրեական վարույթին:

1.5. Հսկող դատախազի կողմից որոշումներ են կայացվել մի շարք անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդումներ իրականացնելու մասին, և ներկայացվել են համապատասխան մեղադրանքներ:

1.6. [REDACTED]

[REDACTED] (այսուհետ նաև՝ Քննիչ) 2023 թվականի մարտի 9-ին որոշում է կայացրել քրեական վարույթով հնարավոր բռնագանձումը կամ բռնագրավումն ապահովելու նպատակով, ի թիվս այլ գույքերի, [REDACTED] անվամբ սեփականության իրավունքով գրանցված, [REDACTED] հասցեում գտնվող հողամասի վրա արգելադրում կիրառելու մասին:

1.7. 2023 թվականի մարտի 10-ին Քննիչը ՀՀ հակակոռուպցիոն դատարան է ներկայացրել գույքն արգելադրելու վերաբերյալ վերոնշյալ որոշման իրավաչափությունը հաստատելու մասին միջնորդություն:

2. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2023 թվականի մարտի 24-ի որոշմամբ Քննիչի միջնորդությունը բավարարվել է:

3. [REDACTED] ներկայացուցիչ [REDACTED] հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանն (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) իր՝ 2023 թվականի մայիսի 5-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի մարտի 24-ի որոշումը՝ [REDACTED] անվամբ սեփականության իրավունքով գրանցված հողամասի արգելադրման իրավաչափությունը հաստատելու մասով, բեկանել է, և Քննիչի՝ գույքի արգելադրման մասին 2023 թվականի մարտի 9-ի որոշումը՝ նշված գույքի մասով, վերացրել:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի կողմից բերվել է հատուկ վերանայման բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունիսի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է հատուկ վերանայման բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Հատուկ վերանայման բողոքի հիմքերը, դրանք հիմնավորող փաստարկները և պահանջը.

5. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական օրենքի սխալ կիրառում և քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ և 132-րդ հոդվածները, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված՝ վարույթի հանրայնության սկզբունքը:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը մասնավորապես նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ արված հետևությունները համընկնում են Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0200/01/13 գործով 2016 թվականի հունիսի 24-ին կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման հետ, սակայն նշված գործով Վճռաբեկ դատարանի հետևությունն առ այն, որ բռնագանձման ենթակա գույք չի կարող համարվել, հետևաբար բռնագանձումն ապահովելու նպատակով կալանք չի

կարող դրվել այն գույքի վրա, որը թեև հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված է, սակայն պատկանում է բարեխիղճ երրորդ անձին, արվել է դատավճռի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում, այլ ոչ թե նախաքննության փուլում գտնվող քրեական վարույթով:

Ըստ բողոքաբերի՝ քրեական վարույթի նախաքննության փուլում քննիչը գույքի սեփականատիրոջ բարեխիղճության կանխավարկածը հաղթահարելու պարտավորություն չունի, ինչը հիմնավորվում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ գույքի արգելադրումն անհապաղ կիրառելու պահանջով:

Միննույն ժամանակ, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումը՝ բողոքաբերը փաստարկել է, որ բարեխիղճ երրորդ անձի սեփականություն հանդիսացող գույքի քաղաքացիական դատավարության կարգով բռնագրավման առարկա լինելը հիմք է այդ գույքի վրա քրեական վարույթի շրջանակներում արգելադրում կիրառելու համար:

6. Արդյունքում բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ օրինական ուժ տալով Առաջին աստիանի դատարանի որոշմանը:

Հատուկ վերանայման բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Գույքի արգելադրման մասին իր՝ 2023 թվականի մարտի 9-ի որոշման մեջ Քննիչը նշել է. «(...) Առանձնապես խոշոր չափերով վերոհիշյալ գույքերի հափշտակություններ կարարած՝

հիշյալ դրվագներով ներկայացված մեղադրանքները հիմնավորվել են մեղադրյալներ

ցուցմունքներով, ինչպես նաև վկայի և ձեռքակալվածի կարգավիճակներում հարցաքննված՝

ցուցմունքներով, կադաստրային գործերի և համապատասխան մատրյանների գնության արձանագրություններով, ՀՀ կադաստրի կոմիտեից և ազգային արխիվից սրացված գրություններով և մի շարք այլ ապացույցներով:

Քննության պարզվել է, որ (...) հափշտակության առարկա հանդիսացած

հասեցում գտնվող հողամասը գրանցվել է

անվամբ, որից հետո հողամասը վաճառել են, ով իր հերթին այն նվիրատվությամբ փոխանցել է, սպա կրկին նվիրատվությամբ վերջինս փոխանցել է, այնուհետև հողամասը բաժանվել է երկու մասի, որի մի մասը վաճառել է կնոջը՝

, սպա հողամասերը բաժանվել են առանձին միավորների և տնօրինվել: Արդյունքում հողամասը բաժանվել է

6 միավորի, որոնցից յուրաքանչյուրին տրվել է առանձին հասցե, կադաստրային ծածկագիր և դրանց վերաբերյալ կազմվել են տարբեր համարների կադաստրային գործեր, դրանք են՝

(...)

3. [redacted] հասցեում գործվող, 0.1 հա մակերեսով հողամաս /կադաստրային գործի համարը՝ [redacted] /,

(...)»:

8. Ըստ դատական վարույթի նյութերի՝ [redacted] հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է [redacted] սեփականության իրավունքը, որի համար հիմք է հանդիսացել 2020 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված անշարժ գույքի մասի առանձնացման և առանձնացվող մասի առուվաճառքի պայմանագիրն ու Երևանի քաղաքապետի՝ [redacted] որոշումը¹:

9. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2023 թվականի մարտի 24-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [վ]արույթի այլ նյութերով հիմնավորվում է, որ տեղի է ունեցել ենթադրյալ հանրորեն վրանգավոր արարք, և այն կասկածը, որ մեղադրյալներ [redacted]

[redacted]

առնչություն ունեն դրա կարարմանը:

Նկարի ունենալով, որ արդեն իսկ Դատարանը հաղթահարված է համարել հիմնավոր կասկածն առ այն, որ մեղադրյալներ [redacted]

[redacted]

առնչություն ունեն իրենց

մեղսագրված հանցանքի կարարմանը, ինչպես նաև ըստ [redacted]

[redacted] նկարմամբ՝ 05.08.2022թ., [redacted]

[redacted] նկարմամբ՝ 22.08.2022թ., [redacted] նկարմամբ՝

08.09.2022թ., [redacted] նկարմամբ՝ 04.10.2022թ., [redacted]

[redacted] նկարմամբ՝ 15.12.2022թ., [redacted] նկարմամբ՝

26.01.2023թ., [redacted] նկարմամբ՝ 13.10.2022թ., և [redacted]

[redacted] նկարմամբ՝ 08.12.2022թ. հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումների՝ (...): Ոստի Դատարանն արձանագրում է, որ գույքի արգելադրման նպատակն առկա է:

(...) Քննությանը հիմնավորվել է, որ նշված հողամասերը հանդիսացել են Հայաստանի Հանրապետության և Երևան համայնքի սեփականություն, դրանք վաճառելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կամ այլ գերատեսչության կողմից աճուրդներ չեն կազմակերպվել, գույքերը չեն օտարվել, հողամասի առուվաճառքի վերաբերյալ [redacted]

[redacted] հետ պայմանագրեր չեն կնքվել: Այսինքն՝ սպացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքերն

¹ Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 7-8:

ուղղակի առաջացել են հանցագործության արդյունքում, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ դրանք ենթակա են բռնագրավման (...), ուստի Դատարանի գնահատմամբ գույքի արգելադրման հիմքը ևս առկա է (...):

Ինչ վերաբերում է (...) ներկայացուցիչ (...) այն փաստարկին, որ.

«Քննարկվող վարույթի շրջանակներում, երբ (...) հանդիսանում է բարեխիղճ երրորդ անձ և որևէ ապօրինի գործարքի մասնակից չի եղել, վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը՝ քննարկվող հողամասի (հասցե՝ ...) մասով ենթակա չէ բավարարման, քանի որ Կրկնապարտության կառավարման պարտիզոնային խմբի անդամները արգելադրման ուղղակի արգելքը և առանց իրավական հիմքերի կասեցման անհատական Ստաբիլիտետի սեփականության իրավունքը իրեն պատկանող հողամասի նկատմամբ:», ապա Դատարանն արձանագրում է, որ անհիմն են վերը նշված պնդումները, քանի որ թիվ (...) քրեական վարույթի շրջանակներում ձեռք բերված բավարար ապացույցների գերակշռությամբ հիմնավորվել է, որ (...) հասցեում գրանցված՝ (...) հասցեում գրանցվող, 0.208 հա մակերեսով հողամասը, ինչպես նաև (...) անվամբ գրանցված՝ (...) հասցեում գրանցվող, 0.1 հա մակերեսով հողամասը ուղղակի սրացվել են հանցագործության արդյունքում, և նշված հողամասերի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար համապատասխանաբար՝ (...) ՀՀ դրամ գումարի և (...) ՀՀ դրամ գումարի չափով արգելադրում է կիրառվել այդ անշարժ գույքերի վրա: (...)»²:

10. Վերաքննիչ դատարանն իր՝ 2023 թվականի մայիսի 5-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Ս]ույն դեպքում առանցքային նշանակություն ունի գույքի բռնագրավման՝ անհատույց վերցման, ենթակա լինելու հանգամանքի պարզումը:

Այլ կերպ՝ անհրաժեշտ է բացահայտել, թե արդյոք քրեական վարույթի համապատասխան էլքի դեպքում գույքը կարող է բռնագրավվել, թե ոչ: Ընդ որում, ինչպես նշվեց, բռնագրավման ենթակա գույքի վրա կալանք կարող է դրվել անկախ դրա՝ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրա կողմից տիրապետելու հանգամանքից:

Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հանցանք կատարած անձը կարող է բռնագրավման ենթակա գույքը, օրինակ, սեփականության իրավունքով տիրապետող մեկ այլ անձի՝ հանցագործության կատարման արդյունքում դրա ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ սրացված լինելու փաստը քողարկելու նպատակով, ուստի նման իրավիճակները բացառելու անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրը բռնագրավման կամ բռնագանձման ենթակա գույքի վրա կալանք դնելու հարցում չի սահմանափակվել այդպիսի գույքի՝ սեփականության իրավունքով միայն մեղադրյալին պատկանելու հանգամանքով:

Օրենսդիրը հաշվի առնելով մասնավոր և հանրային շահերի հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը՝ նախատեսել է գույքի վրա բռնագրավումը բացառող չորս դեպք.

² Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 11-26:

1) Հանցանք կատարած անձի կամ նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով

2) բարեխիղճ երրորդ անձի գույքը,

3) րուժողին վերադարձման ենթակա գույքը,

4) րուժողին հանցագործությանը պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բռնագրավման ենթակա գույք չի կարող համարվել, հետևաբար նաև բռնագրավումն ապահովելու նպատակով արգելանք չի կարող դրվել այն գույքի վրա, որ թեև համարվում է հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ սրացված, սակայն պարկանում է բարեխիղճ երրորդ անձին:

Սույն դեպքում նախաքննական մարմինը դատարանին չի ներկայացրել որևէ հիմնավորում առ այն, որ [REDACTED] այս կամ այն կերպ ներգրավված է եղել ենթադրյալ հանցանքի կատարմանը, այդ թվում՝ գույքի հանցագործության կատարման արդյունքում սրացված լինելու փաստը քողարկելու նպատակով:

Այլ խոսքով՝ վարույթն իրականացնող քննիչը գույքի արգելադրման մասին որոշում կայացնելիս չի հերքել գույքի սեփականատեր [REDACTED]՝ բարեխիղճ երրորդ անձ հանդիսանալու հանգամանքը և հակառակը հիմնավորող որևէ տվյալ չի ներկայացրել Առաջին արյանի դատարան:

Մինչդեռ, գույքի արգելանքի իրավաչափությունը հաստատելու մասին դատարանի որոշումը պետք է հիմնվեր ոչ միայն գույքի՝ հանցագործության արդյունքում սրացված լինելու հանգամանքը հաստատելով կամ հերքելով, այլ գույքի արգելադրումը բացառող հանգամանքների առկայությունը պարզելով և սեփականատիրոջ բարեխիղճության կանխավարկածը հաղթահարելով:

Հիշյալ հանգամանքը Առաջին արյանի դատարանի կողմից պարզաճ քննության առարկա չի հանդիսացել, ինչը հանգեցրել է ոչ իրավաչափ որոշման կայացմանը և վերջնարարդյունքում՝ անձի սեփականության իրավունքի անհարկի սահմանափակմանը:

Սույն վարույթի փաստերի նկատմամբ կիրառելով վերը հիշատակված իրավական դիրքորոշումները՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարան ներկայացված նյութերում բացակայել են [REDACTED] [REDACTED] հասցեում գտնվող, [REDACTED] պարկանող անշարժ գույքի արգելադրման որոշման իրավաչափությունը հաստատելու իրավական հիմքերը:

Մասնավորապես, վարույթի նյութերում բացակայում են հիմնավորվումներն առ այն, որ.

1) [REDACTED] անվամբ գրանցված գույքը փաստացի պարկանում է քրեական վարույթով քրեական հետապնդման ենթարկված կամ նրանց հանցակցած անձանց,

2) Սեփականության իրավունքով նշված գույքը չի պարկանում բարեխիղճ երրորդ անձի կամ չկան գույքի արգելադրումը բացառող այլ հանգամանքներ:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ նշված երկու հանգամանքների հաստատումը կամ հերքումը էական նշանակություն ունեն օրինական ու հիմնավոր դատական ակտ կայացնելու համար, այնինչ սույն դեպքում գույքի արգելադրման

անհրաժեշտությունը և իրավաչափությունը հիմնավորող փաստարկներով, և գույքի արգելադրման մասին որոշման հիմնավորվածությունը հաստատող նյութերի պատճեններով չի հաղթահարվել գույքի սեփականատիրոջ բարեխղճության կանխավարկածը:

Անհուփելով վերոշարադրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին արյանի դատարանի կողմից հիշարակված դատավարական նորմերի խախտումներն էականորեն սահմանափակել են [REDACTED]՝ ՀՀ Սահմանադրությամբ և դատավարական նորմերով վերապահված իրավունքները, որպիսի հանգամանքներից ելնելով՝ [REDACTED] լիազոր ներկայացուցիչ [REDACTED] հայտնի վերանայման բողոքը պետք է բավարարել, իսկ Առաջին արյանի դատարանի վիճարկվող որոշումը՝ [REDACTED] հասցեում գտնվող, սեփականության իրավունքով [REDACTED] պատկանող անշարժ գույքի արգելադրման իրավաչափությունը հաստատելու մասով բեկանել և բեկանված մասով կայացնել դրան փոխարինող դատական ակտ (...)³:

Վճռաբեկ դատարանի (դատական կազմի մեծամասնության) դիրքորոշումը և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երրորդ անձի գույք արգելադրելիս պետք է ելնել երրորդ անձի «բարեխղճության կանխավարկած»-ից, որը պետք է հաղթահարվի վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան հիմնավորումների ներկայացմամբ:

Արդյունքում, ըստ Վճռաբեկ դատարանի՝ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով [REDACTED] բարեխղճ երրորդ անձ հանդիսանալու հանգամանքը և վերացնելով նրա գույքի արգելադրման մասին որոշումը, եկել է իրավաչափ եզրահանգման:

Տարբերվող հատուկ կարծիքի հիմնավորումները և եզրահանգումը.

12. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փոխապետելու, օգտագործելու և փոփոխելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(...):»:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի

³ Տե՛ս նյութեր, հատոր 5. թերթեր 17-28:

օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ փուլանքների վճարումն ապահովելու համար»:

13.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), *Borzonov v. Russia* գործով կայացված վճռում մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև⁴:

14. Վճռաբեկ դատարանը, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համատեքստում քննարկելով գույքի վրա կալանք դնելու ինստիտուտը, *Այլա Սեկոյանի* վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է. «(...) [Կ]ալանք կարող է դրվել հետևյալ անձանց գույքի վրա՝

(...)

դ) այլ անձինք, որոնց սեփականությունն է հանդիսանում կամ որոնց մոտ է գրնվում այնպիսի գույք, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն սրացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողությունների արդյունքում:

(...)

Օրենքում այլ անձանց նշումը, ում սեփականությունն է հանդիսանում կամ ում մոտ գրնվում է այնպիսի գույք, որի վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն սրացվել է մեղադրյալի կամ կասկածյալի հանցավոր գործունեության արդյունքում, պայմանավորված է նրանով, որ գործնականում հաճախ վերջինների կողմից նշված գույքը թաքցվում է այլ անձանց մոտ՝ դրա հայտնաբերումը դժվարեցնելու կամ անհնարին դարձնելու, ամեն կերպ իրենց մոտ պահպանելու նպատակով:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի վրա կալանք դնելու հիմքերի առկայության պարզաճ հիմնավորումն առանցքային նշանակություն ունի ինչպես գույքի վրա կալանք դնելու մասին օրինական որոշման կայացման, այնպես էլ հանրային շահի ու անհատի սեփականության իրավունքի պաշտպանության արդարացի հավասարակշռությունն ապահովելու փնտանկյունից: Ուստի, գույքի վրա կալանք դնելիս վարույթն իրականացնող մարմինը, ելնելով գույքի վրա կալանք դնելու նպատակից, պետք է պարզապես կերպով հիմնավորի, որ.

(...)

3) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված հանցակազմերով առկա է հիմնավորված ենթադրություն առ այն, որ գույքը, որի վրա կալանք է դրվում, սրացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում,

(...)

Կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող և սույն որոշման 15-րդ կետի (դ)

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Borzonov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

ենթակերպում նշված անձանց սեփականությունը հանդիսացող կամ նրանց մուր գտնվող գույքի վրա կալանք դնելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է բավարար հիմքերի վկայակոչմամբ հիմնավորել կալանադրվող գույքի՝ կասկածյալի կամ մեղադրյալի առերևույթ հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում ձեռքբերված լինելու հնարավորությունը: (...)»⁵:

14.1. Մեկ այլ՝ Արթուր Անդրեասյանի վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Բ]ռնագանձման ենթակա գույքի վրա կալանք կարող է դրվել անկախ դրա՝ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրա կողմից տիրապետելու հանգամանքից: Այդ առումով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հանցանք կատարած անձը կարող է բռնագանձման ենթակա գույքը, օրինակ, սեփականության իրավունքով տրամադրել մեկ այլ անձի՝ հանցագործության կատարման արդյունքում դրա ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ սրացված լինելու փաստը քողարկելու նպատակով: Ուստի նման իրավիճակները բացառելու անհրաժեշտությունից ելնելով՝ օրենսդիրը բռնագանձման ենթակա գույքի վրա կալանք դնելու հարցում չի սահմանափակվել այդպիսի գույքի՝ սեփականության իրավունքով միայն կասկածյալին կամ մեղադրյալին պատկանելու հանգամանքով:

Չնայած դրան՝ հաշվի առնելով մասնավոր և հանրային շահերի հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը՝ նախատեսվել է գույքի վրա բռնագանձում տարածելը բացառող երկու դեպք.

- 1) երբ տվյալ գույքը պատկանում է բարեխիղճ երրորդ անձին,
- 2) երբ տվյալ գույքն անհրաժեշտ է տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պարճատված վնասների հատուցման համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնագանձման ենթակա գույք չի կարող համարվել, հետևաբար նաև բռնագանձումն ապահովելու նպատակով կալանք չի կարող դրվել այն գույքի վրա, որ թեև համարվում է հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ սրացված, սակայն պատկանում է բարեխիղճ երրորդ անձին կամ անհրաժեշտ է տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պարճատված վնասների հատուցման համար (...):»⁶:

14.2. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գույքի վրա կալանք դնելու մասին որոշմանն առաջադրվող չափանիշներին, Մամվել Մայրապետյանի վերաբերյալ գործով որոշմամբ նշել է. «(...) [Ա]նձի սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը բացառող կարևոր դատավարական երաշխիք է օրենսդրական այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ, պետք է լինի օրինական, հիմնավորված և պարճատարանված: Իսկ դա ենթադրում է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է կայացվի քրեադատավարական օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման անհրաժեշտությունը, այլ կերպ՝ դրա կիրառման հիմքերի և նպատակների առկայությունը հիմնավորող՝ քրեական

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ալլա Մեկոյանի վերաբերյալ գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0185/11/11 որոշման 15-17-րդ կետերը:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Անդրեասյանի վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԳ/0200/01/13 որոշման 19.2 կետը:

գործի նյութերից բխող փաստական փյուռների հիման վրա: Գույքի վրա կայանք դնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը, հիմնվելով գործում առկա նյութերի վրա, պարտավոր է հիմնավորել դրա իրավական հիմքերի և նպատակներից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը՝ չսահմանափակվելով միայն գույքի վրա կայանք դնելը կարգավորող օրենսդրական ձևակերպումների շարադրանքով: Միայն վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում է հնարավոր ապահովել հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը: Հարկ է նշել, որ կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման համար անհրաժեշտ է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը կամ դատական ծախսերն ապահովելու նպատակներից առնվազն մեկի առկայությունը: (...)»⁷:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարույթային հնարավոր ծախսերի հարուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար:

2. Գույքը կարող է արգելադրվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ սրացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգրագործումից սրացված եկամուտն է կամ այլ փեսակի օգուտ.

2) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգրագործված կամ օգրագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց.

3) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգրագործումից սրացված եկամուտ կամ այլ փեսակի օգուտ.

4) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով փեղափոխված մաքսանենգության առարկա է.

5) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օգրավել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրվել կարող է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհանուր սեփականության իրավունքով պարկանող գույքը՝ անկախ գույքի փեսակից և այն փիրապետողից:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մամվել Մայրապետյանի վերաբերյալ գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԴ/0587/11/18 որոշման 15-րդ կետը:

Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապարասիան բաժինը:

(...)

3. Արգելադրման ենթակա չէ՝

1) այն գույքը, որի վրա օրենքի համաձայն չի կարող բռնագանձում կամ բռնագրավում փարածվել.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նախաքննության ընթացքում գույքն արգելադրվում է քննիչի որոշման հիման վրա: Այդ որոշումը և այն հիմնավորող նյութերը եռօրյա ժամկետում ներկայացվում են իրավասու դատարանի հաստատմանը: Գաղափարական վարույթում գույքն արգելադրվում է դատարանի որոշմամբ:

(...)

3. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերի առերևույթ առկայության դեպքում քննիչը համապարասիան գույքի արգելադրումն իրականացնում է անհապաղ:

(...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ սրացված գույքը, այդ գույքի օգտագործումից սրացված եկամուտը և այլ փեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

(...)

7. Բռնագրավման ենթակա չէ հանցանք կատարած անձի կամ նրա ինքնաձեռքի փակ գրնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապարասիան, որը սահմանված է օրենքով, բարեխիղճ երրորդ անձի գույքը, փուժողին վերադարձման ենթակա գույքը, ինչպես նաև փուժողին հանցագործությամբ պարճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը: Եթե բռնագրավման ենթակա գույքը ծանրաբեռնված է բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներով, ապա այդպիսի իրավունքները պահպանվում են բռնագրավումից հետո:

8. Եթե փուժողի և բարեխիղճ երրորդ անձի միջև առկա է վեճ բռնագրավման ենթակա գույքի վերաբերյալ, ապա այդ գույքի բռնագրավումը կարող է կատարվել քաղաքացիական դատավարության կարգով:

(...)

11. Սույն հոդվածի իմաստով՝ բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որը ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ սրացված գույք է, այդ գույքի օգտագործումից սրացված եկամուտ կամ այլ փեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հանցագործության առարկա: Բարեխիղճ երրորդ անձ է համարվում նաև այն անձը, որի գույքն իր կամքից անկախ հանգամանքներով դուրս է եկել իր փիրապետությունից, կամ

որը գույքը հանձնել է այլ անձի, եթե նա չգիտեր ու չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցանք կատարելու նպատակներով»:

16. Ինչպես հետևում է նախորդ կետում մեջբերված դատավարական նորմերի վերլուծությունից, օրենսդիրը գույքի արգելադրման նպատակ է համարում՝

- 1) հանցագործությանը պատճառված հնարավոր վնասի հատուցումը
- 2) հնարավոր վարության ծախսերի հատուցումը.
- 3) գույքի հնարավոր բռնագանձումն ապահովելը
- 4) գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելը:

Մինևսյն ժամանակ, օրենսդիրը տարանջատում է գույքի արգելադրման երկու խումբ հիմքեր, որոնք են.

1) ապացույցների գերակշռությանը հիմնավորվում է, որ արգելադրման ենթակա գույքն ունի ենթադրյալ հանցավոր ծագում.

2) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել:

Ընդ որում, կախված գույքի արգելադրման նպատակից և հիմքից՝ օրենսդիրը տարանջատում է նաև արգելադրման ենթակա գույքը՝ փաստացի սահմանելով այն անձանց շրջանակը, ում գույքի վրա կարող է արգելանք դրվել:

16.1. Այսպես, հանցագործությանը պատճառված հնարավոր վնասի հատուցման նպատակով արգելանք կարող է դրվել բացառապես մեղադրյալի կամ վերջինիս գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի (օրինակ՝ անչափահաս մեղադրյալի դեպքում օրինական ներկայացուցիչը, աշխատողի դեպքում՝ իրավաբանական անձը), իսկ վարության ծախսերի հատուցման նպատակով՝ բացառապես վճարունակ մեղադրյալի՝ օրինական ծագում ունեցող գույքի վրա, եթե առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել: Իսկ հնարավոր բռնագրավման կամ բռնագանձման նպատակով արգելադրման ենթակա է ցանկացած, այդ թվում՝ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձի գույք: Սակայն եթե առաջին դեպքում գույքի արգելադրման հիմքը ողջամիտ ենթադրությունն է, որ կոնկրետ գույքը կարող է ոչ իրավաչափորեն տնօրինվել, տիրապետվել կամ օգտագործվել, ապա երկրորդ դեպքում գույքի արգելադրման հիմքի առումով օրենսդիրն ավելի բարձր ապացուցողական շեմ է նախատեսում, այն է՝ ենթադրության փոխարեն գույքի հանցավոր ծագումը հիմնավորող ապացույցների գերակշռություն:

16.2. Վերոշարադրյալից բխում է, որ անձի սեփականության իրավունքը սահմանափակող հարկադրանքի միջոցի՝ գույքի արգելադրման կիրառման ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարաչափ պաշտպանությանն ուղղած պահանջներն առավել խիստ են այն պայմաններում, երբ արգելադրման է ենթակա քրեական վարույթով մեղադրյալի կարգավիճակ չունեցող երրորդ անձի գույքը:

Ըստ այդմ էլ, օրենսդիրը որոշակի առանձնահատկություններ է սահմանել երրորդ անձի գույքի արգելադրման համար և տարբերակել երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի և մեղադրյալի գույքի արգելադրման կառուցակարգերը: Այս տարբերակման, մասնավորապես երրորդ անձի սեփականության իրավունքի սահմանափակման առավել խիստ պահանջներ նախատեսելու կարգավորման հիմքում ընկած է իրավաչափ այն գաղափարը, որ քրեական օրենքով արգելված արարքի

կատարմանն առնչություն չունեցող անձի իրավունքների սահմանափակման իրավաչափությունը ենթադրում է հնարավոր կամայականություններն ու չարաշահումները բացառող առավել լուրջ երաշխիքների առկայություն՝ ապահովելու համար միջամտության համաչափությունը հետապնդվող նպատակին:

16.3. Վերոգրյալի համատեքստում գտնում են, որ չնայած գույքի արգելադրման նպատակների և հիմքերի առկայության պայմաններում բարեխիղճ (*bona fide*) երրորդ անձին պատկանող գույքի արգելադրման արգելքին՝ համապատասխան գույքի՝ հանցավոր ծագում ունենալու հիմքերի առերևույթ առկայության դեպքում դրա արգելադրումն անհապաղ իրականացնելու պահանջի առկայության պայմաններում ոչ իրատեսական է երրորդ անձանց գույքի նկատմամբ արգելադրում կիրառելիս անձի բարեխիղճության հարցի քննարկումը՝ պայմանով, որ առկա չեն անձի բարեխիղճության մասին աներկբայորեն վկայող ապացույցներ: Գույքի արգելադրման սկզբնական փուլում, ինչպես քիսում է գործող օրենսդրական կարգավորումներից, քննիչը պետք է ապացույցների գերակշռությամբ հիմնավորի գույքի՝ հանցավոր ճանապարհով ստացված, հանցագործության գործիք կամ միջոց լինելու հանգամանքները, այլ ոչ թե երրորդ անձի կողմից գույքի՝ հանցավոր ծագում ունենալու հանգամանքի գիտակցումը կամ գիտակցման հնարավորությունը: Վերոհիշյալը, սակայն, չի ենթադրում, որ քրեական վարույթի ընթացքում երրորդ անձի գույքը կարող է շարունակաբար պահվել արգելանքի տակ առանց վերջինիս՝ բարեխիղճ ձեռքբերող լինելու հարցի քննարկման, ինչը կարող է հանգեցնել սեփականության իրավունքի ոչ համաչափ սահմանափակման: Վերոնշյալ իրավիճակը բացառելուն ուղղված գործիքակազմ է սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքների շրջանակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության քննարկման ընթացակարգը, որը հնարավորություն է տալիս գույքի սեփականատիրոջը, դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձին կամ նրանց ներկայացուցչին մինչդատական վարույթի ընթացքում գույքի արգելադրումից երեք ամիս հետո միջնորդություն ներկայացնելու դատարան գույքի արգելադրումը վերացնելու մասին, որի շրջանակում կարող է քննարկման առարկա դարձվել անձի՝ բարեխիղճ ձեռքբերող լինելու մասին հարցը: Ընդ որում, հարկ է նշել, որ նման ընթացակարգի նախատեսումը համահունչ է սեփականության իրավունքի պաշտպանության դատական երաշխիքների վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Մասնավորապես, սեփականության իրավունքին միջամտության համաչափության տեսանկյունից Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ թեպետ Եվրոպական կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը հստակ դատավարական պահանջներ չի նախատեսում, սակայն իր գույքից անարգել օգտվելու իրավունքի առնչությամբ դատական վարույթը պետք է անձին հնարավորություն տա իրավասու մարմնի առջև արդյունավետորեն վիճարկելու իր իրավունքին միջամտությունը⁸:

17. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- 2023 թվականի մարտի 9-ի դրությամբ

■ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է եղել

■ սեփականության իրավունքը, որի համար հիմք է հանդիսացել 2020

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *G.I.E.M. S.R.L. and Others v. Italy [GC]* գործով 2018 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 1828/06, 302-րդ կետը:

թվականի սեպտեմբերի 30-ին կնքված անշարժ գույքի մասի առանձնացման և առանձնացվող մասի առուվաճառքի պայմանագիրն ու Երևանի քաղաքապետի՝ [REDACTED] որոշումը⁹,

- 2023 թվականի մարտի 9-ին Քննիչը որոշում է կայացրել հնարավոր բռնագանձումը կամ բռնագրավումն ապահովելու համար, ի թիվս այլ գույքերի, [REDACTED] անվամբ սեփականության իրավունքով գրանցված, [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքի վրա արգելադրում կիրառելու մասին¹⁰,

- Առաջին ատյանի դատարանն իր՝ 2023 թվականի մարտի 24-ի որոշմամբ հաստատել է, ի թիվս այլ գույքերի, նաև վերոնշյալ գույքի արգելադրման իրավաչափությունը:

Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ Քննիչի կողմից ներկայացված ապացույցների գերակշռությամբ հիմնավորվել է, որ [REDACTED] անվամբ գրանցված՝ [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքն ուղղակի ստացվել է հանցագործության արդյունքում:

Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ նախաքննության մարմինը հիմնավորել է, որ խնդրո առարկա հողամասերը հանդիսացել են Հայաստանի Հանրապետության և Երևան համայնքի սեփականություն, դրանք վաճառելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կամ այլ գերատեսչության կողմից աճուրդներ չեն կազմակերպվել, գույքերը չեն օտարվել, հողամասի առուվաճառքի վերաբերյալ պայմանագրեր չեն կնքվել, այլ կերպ՝ հաստատված է համարել հիմնավոր կասկածն առ այն, որ համապատասխան հողամասերը ձեռք են բերվել հանցանք կատարելու արդյունքում¹¹,

- Վերաքննիչ դատարանը 2023 թվականի մայիսի 5-ի որոշմամբ նշել է, որ այն պայմաններում, երբ չեն ներկայացվել փաստեր այն մասին, որ [REDACTED] անվամբ գրանցված գույքը փաստացի պատկանում է քրեական վարույթով քրեական հետապնդման ենթարկված կամ նրանց հանցակցած անձանց, գույքի արգելադրման անհրաժեշտությունը և իրավաչափությունը հիմնավորող փաստարկներով և գույքի արգելադրման մասին որոշման հիմնավորվածությունը հաստատող նյութերի պատճեններով չի հաղթահարվել գույքի սեփականատիրոջ բարեխղճության կանխավարկածը, անհարկի սահմանափակվել է [REDACTED] սեփականության իրավունքը: Արդյունքում Վերաքննիչ դատարանն [REDACTED] գույքի արգելադրման մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ մասով վերացրել Քննիչի՝ գույքի արգելադրման մասին 2023 թվականի մարտի 9-ի որոշումը¹²:

18. Նախորդ կետում արձանագրված փաստական հանգամանքները գնահատելով սույն հատուկ կարծիքի 12-16.3-րդ կետերում շարադրված նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ գտնում են, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել այն հանգամանքը, որ Քննիչի կողմից ներկայացվել են ապացույցներ առ այն, որ [REDACTED] անվամբ գրանցված՝ [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք է բերվել առերևույթ հանցանքի

⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

կատարման արդյունքում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ Առաջին ատյանի դատարանը, քննարկելով [REDACTED] պատկանող [REDACTED] հասցեում գտնվող անշարժ գույքի արգելադրման իրավաչափությունը, միայն անդրադարձել է նշված գույքի ենթադրյալ հանցանքի կատարման արդյունքում ստացված լինելու հանգամանքին և քննարկման առարկա չի դարձրել [REDACTED] բարեխիղճ երրորդ անձ հանդիսանալու հանգամանքը, և որ գույքն արգելադրելու մասին որոշմամբ չեն ներկայացվել այնպիսի փաստարկներ, որոնք կհիմնավորեին գույքի ձեռք բերման պահին [REDACTED] կողմից այդ գույքի՝ հանցավոր ծագում ունենալու հանգամանքի գիտակցումը կամ գիտակցման հնարավորությունը, ապա գտնում եմ, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գույքի հնարավոր բռնագրավման կամ բռնագանձման նպատակով գույքն անհապաղ արգելադրելու օրենսդրական պահանջի առկայության պայմաններում արգելադրման անհրաժեշտության և իրավաչափության տեսանկյունից քննիչը պարտավոր է ներկայացնել ապացույցներ գույքի ենթադրյալ հանցավոր ծագման մասին, ինչը և պետք է դատական ստուգման առարկա դառնա սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքների վարույթով:

19. Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ [REDACTED] անվամբ սեփականության իրավունքով գրանցված գույքն արգելադրելու մասին որոշում կայացնելիս քննիչը պետք է հիմնավորեր, իսկ Առաջին ատյանի դատարանը հաստատեր վերջինիս ոչ բարեխիղճ ձեռքբերող լինելու հանգամանքը, իրավաչափ չէ:

Ոստի Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի մարտի 24-ի որոշումը՝ [REDACTED] անվամբ սեփականության իրավունքով գրանցված, [REDACTED] հասցեում գտնվող գույքի արգելադրման իրավաչափությունը հաստատելու մասով բեկանելով, և գույքի արգելադրման մասին Քննիչի՝ 2023 թվականի մարտի 9-ի որոշումը՝ նշված գույքի մասով վերացնելով, թույլ է տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ, 132-րդ և 297-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության սկզբունքի խախտման, ինչը նույն օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածով՝ մնում եմ այն *հարուկ կարծիքին*, որ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի մայիսի 5-ի որոշումը պետք է բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի մարտի 24-ի որոշմանը:

Դատավոր՝

Ռ.Մխիթարյան